

30118 ՏԱՐԿԵ



Պրոլետարներ քունք յերկրների, միացե՛ք

3K33 ԿՐ

Գ-68

հ. Ա Ս Ա Լ Ի Ւ 15 JUN 2005

20 NOV 2009

ԳՅՈՒՂՈՒՄ ԿԱՏԱՐՎՈԴ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

ՊԵՏՀՐԱԾ—

ԿՅԻ-ՍԱԿՑԱԿՈՆ—ՔԱՂԱՔԱԿՈՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ՅԵՐԵՎԱՆ, 1938

05.08.2013


3011

2009 ИЮН 21 10:30



3232
38

И. СТАЛИН
О РАБОТЕ В ДЕРЕВНЕ
Госиздат—Отдел партийно-полити-
ческой литературы, Ереван



ԳՅՈՒՂՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Համ Կ(թ)Կ ԿԿ-ի ու ԿՎՀ-ի միացյալ պլենումում
արտասահմած ճառը 1933 թի հունվարի 11-ին

Ընկերներ: Յես կարծում եմ, վոր
հուետորները ճիշտ նկարագրեցին կու-
սակցական աշխատանքի վիճակը գյու-
ղում, նրա թերությունները, նրա ար-
ժանիքները, —առանձնապես նրա թերու-
թյունները: Յեզ այնուամենայնիվ,
թվում ե ինձ, վոր նրանք չասացին
ամենագլաւազորը մեր աշխատանքի թե-
րությունների վերաբերմամբ գյուղում,
լաց չարին այդ թերությունների ար-
ժատները: Մինչդեռ խնդրի այդ կողմը
մեզ համար ամենից ավելի մեծ շահա-
գրգռություն ունի: Թույլ տվեք,
այդ պատճառով, իմ կարծիքն արտա-
հայտել մեր աշխատանքի թերություն-
ների մասին գյուղում, արտահայտել

այն ամբողջ չիտակությամբ, վոր հա-
տուկ ե բոլցեկիկներին:

Վո՞րն ե գյուղում կատարած մեր
աշխատանքի դլավոր թերությունը
վերջին տարվա ընթացքում, 1932 թվի
ընթացքում:

Գլխավոր թերությունն այն ե, վոր
հացամթերումներն այս տարի մեզա-
նում ավելի մեծ գժվարություններով
կատարվեցին, քան անցյալ տարի, քան
1931 թվին:

Այս բանը բերքի վատ վիճակով բա-
ցարել ամենեին չի կարելի, վորով-
հետև բերքն այս տարի մեղանում ա-
վելի վատ չեր, այլ ավելի լավ եր,
քան անցյալ տարի: Վոչ վոք չի կարող
ժամանել, վոր հացահատիկների համա-
խառն հավաքը 1932 թվին ավելի շատ
եր, քան 1931 թվին, յերբ յերաշոը
ԽՍՀՄ Հյուսիս-Արևելքի 5 հիմնական
շրջաններում զգալի չափով կը ճատեց
յերերի հացահատիկային հաշվեկըսը:
Իհարեւ, մենք 1932 թվին ել բերքի վո-

րոշ կորուսաներ ունեցանք կլիմայական
անբարենպատ պայմանների չնորդիվ
կուբանում ու թերեգում, ինչպես նաև
Ռոկաբինայի միքանի շրջաններում:
Բայց տարակույս չի կարող լինել, վոր
այդ կորուսաները կես բաժինն ել չեն
կազմում այն կորուսաների, վորոնք
տեղի ունեցան 1931 թվին՝ ԽՍՀՄ
Հյուսիս-Արևելյան շրջաններում յեղած
յերաշոի պատճառով: Հետեւարար, 1932
թվին մեզ մոտ՝ յերկրում ավելի շատ
հաց կար, քան թե 1931 թվին: Յեզ
այսուամենայնիվ, չնայած հանդա-
մանքին, հացամթերումները մեզ մոտ
1932 թվին ավելի մեծ գժվարություն-
ներով կատարվեցին, քան անցյալ տա-
րի:

Ինչո՞ւմն ե այստեղ բանը: Վո՞րոնեղ
են մեր աշխատանքի այս թերության
պատճառները: Ինչո՞վ բացարել այս
անհամապատասխանությունը:

1) Այդ բացատրվում ե ամենից ա-
ռաջ նրանով, վոր մեր ընկերները տե-

զերում, մեր դյուղական աշխատողները չկարողացան հաշվի առնել դյուղի նոր իրադրությունը, վոր ստեղծվել եր հացի կոլտնտեսային առևտուր հայտարարելով: Յեվ հենց այդ պատճառով, վոր նրանք հաշվի չառան նոր իրադրությունը, հենց այդ պատճառով նրանք չկարողացան նոր իրադրությանը համապատասխան նոր ձեռով վերակազմվել: Քանի գեռ հացի կոլտնտեսային առևտուր չկար, քանի գեռ հացի յերկու գին չկար, պետական ու չուկայական,—մեկ իրադրություն կար դյուղում: Հացի կոլտնտեսային առևտուր հայտարարելու հետ միասին՝ իրադրությունը պետք է կտրուկ կերպով փոխվեր, վորովհետեւ կոլտնտեսային առևտրի հայտարարումը նշանակում է հացի չուկայական գնի որինականացում, վոր ավելի բարձր եր, քան սահմանված պետական գինը: Կարիք ել չկա ապացուցելու, վոր այս համդամանքը պետք է դյուղացիների մեջ վո-

րում. զսպվածություն ստեղծեր հացը պետությանը հանձնելու գործում: Գյուղացին կըսադատում եր այսպես. «Հայտարարված ե հացի կոլտնտեսային առևտուր, որինականացված ե չուկայական գինը, չուկայում յես կարող եմ հացի միեննույն քանակության համար ավելի շատ ստանալ, քան թե հացը պետությանը հանձնելիս,—հետեւաբար, յեթե յես հիմար չեմ, յես պետք է հացը մի փոքր պահեմ, պետությանը հանձնեմ այն ավելի քիչ, կոլտնտեսային առևտրի համար պահեմ ավելի շատ, և այսպիսով հանձնեմ այն բանին, վոր ավելի շատ ստանամ վաճառված հացի նույն քանակության համար»:

Ամենահասարակ և բնական արարանություն:

Բայց դժբախտությունն այստեղ այն է, վոր մեր դյուղական աշխատողները, համենայն գեալս նրանցից չատերը, չհասկացան այս հասարակ ու բնական

բանը։ Առօհնության իշխանության առաջարանքները չլիժեցնելու համար՝ կոմունիստները պետք է այս նոր իրադրության ժամանակ բներքահավաքի առաջին իսկ որերից, գեռ 1932 թվի հունիսին, —նրանք պետք է ամեն կերպ ուժեղացնելին ու առաջ մղելին հացամթերումները։ Այդ եր պահանջում իրադրությունը։ Իսկ նրանք ի՞նչ պես վարչեցին իրոք։ Հացամթերումներն առաջ մղելու փոխարեն՝ նրանք սկսեցին առաջ մղել ամեն տեսակ ֆոնդերը կտղմելու դորձը, հենց գրանով ուժեղացնելով հաց հանձնողների զըսպածությունը՝ պետության հանդեպ նրանց պարտավորությունները կատարելու դորձում։ Զըսպոնելով նոր իրադրությունը՝ նրանք սկսեցին վախճանաւ վո՛չ թե նրանից, վոր գյուղացիների զսպվածությունը հացահատիկը հանձնելու դորձում կարող է արդեկակել հացամթերումները, այլ սկսեցին վախճանաւ նրանից, վոր գյուղացիները դևիկ

չնն ընկնի հացը պահել՝ հետագայում կոլտնտեսային առեւտրի գծով չուկա հանելու համար և, մեկ եւ տեսար, վերցրին ու իրենց ամբողջ հացը ելեւատորներին հանձնեցին։

Այլ կերպ ասած՝ մեր զյուղական կոմունիստները, գոնե նրանց մեծամասնությունը, կոլտնտեսային առեւտրն ըմբռնեցին լոկ նրա դրական կողմից, հասկացան ու յուրացրին նրա դրական կողմը, բայց բոլորովին չհասկացան ու չյուրացրին կոլտնտեսային առեւտրի բացասական կողմերը, —չառկացան այն, վոր կոլտնտեսային առեւտրի բացասական կողմերը կարող են մեծ վնաս հասցնել պետությանը, յեթե նրանք, այսինքն՝ կոմունիստները, հացի բերքահավաքի հենց առաջին որերից չսկսեն ամբողջ թափով առաջ մղել հացամթերման կամպանիան։

Յեվ այս սխալը միայն կոլտնտեսություններում աշխատողները չեն, վոր թույլ են ավել։ Այս սխալը թույլ են

աղել նաև խորհանտեսությունների դե-
րեկտորները, վորոնք, վոճրագործո-
րեն պահելով պետությանը հանձնելիք
հացը՝ սկսեցին այն ավելի բարձր դնով
վաճառել ուրիշներին:

Հաշվի առեօլ ելին արդյոք ժողկոմ-
խորհն ու կեն իրենց հայտնի վորոշ-
ման մեջ կոլտնտեսային առետրի ծա-
վալման մասին՝ այս նոր իրադրու-
թյունը, վոր կազմավորվել եր հացի
կոլտնտեսային առետրի կապակցու-
թյամբ։ Այո՛, հաշվի առել ելին։ Այդ
վորոշման մեջ ուղղակի ասվում ե, թե
հացի կոլտնտեսային առետուրը կարե-
լի յե սկսել այն բանից հետո միայն,
յերբ ամբողջությամբ ու լրիվ կատար-
ված կլինի հացամթերումների պլանը,
և հավաքած կլինի սերմացուն։ Այն-
տեղ ուղղակի առված ե, վոր միմիայն
հացամթերումներն ավարտելուց և սեր-
մացուն հանձնելուց հետո, մոտավորա-
պես 1933 թվի հունվարի 15-ի մոտեր-
քը, —միմիայն այդ պայմանները կա-

տարելուց հետո կարելի կլինի հացի
կոլտնտեսային առետուրն սկսել։ Իրենց
այդ վորոշմանվ ժողկոմխորհն ու կե-
կարծես թե ասում եյին մեր գյուղա-
կան աշխատողներին։ Ճեր ուշադրու-
թյունը մի՛ մթարկեք ամեն առաջ
փոնդերի ու պաշարների հոգսավ, մի՛
չեղվեք գլխավոր ինվլուց, ծավալեցե՛ք
հացամթերումները բերքահավաքի առա-
ջին իսկ որերից և արագացրե՛ք դրանք,
վորոշչետև առաջին պատվիրանը—հա-
ցամթերումների պլանը կատարելն ե,
յերկրորդ պատվիրանը—սերմացուների
հանձնումը, և այդ պայմանները կա-
տարելուց հետո միայն կարող եք սկսե՛
ու ծավալել հացի կոլտնտեսային ա-
ռետուրը։

Կկ-ի Քաղլուուրոյի ու Ժողկոմխոր-
հի սխալը, գուցե, այն եր, վոր նրանք
բավականաչափ հաստատակամորեն
չընդգծեցին գործի այս կողմը և մեր
գյուղական աշխատողներին բավականա-
չափ բարձրաձայն չնախազգուշացրին

այն վտանգների մասին, վորոնք թաղ-
նըլուծ են կոլտնտեսային առևտրի մէջ:
Բայց վոր նրանք այդ վտանգների մա-
սին նախազգուշացրին, և բավականա-
չափ պարզ կերպով նախազգուշացրին,
—դրանում վոչ մի կատկած լինել չի
կարուի: Պետք ե ընդունել, վոր ԿԿ-ն
ու ժողկոմիորհա մի փոքր գերազնա-
հատեցին մեր՝ տեղերում աշխատողնե-
րի, —վո՛չ միայն շըջանային, այլև մի
շարք մարզային տշխատողների, —լե-
նինյան կովկազությունն ու խորաթա-
փանցությունը:

Գուցե պետք չե՞ր հացի կոլտնտեսա-
յին առևտուր հայտարարել: Գուցե այդ
սխա՞լ եր, առանձնապես, յեթե նկատի
ունենանք այն հանգամանքը, վոր կոլ-
տնտեսային առևտուրին հատուկ են վո՛չ
միայն դրական, այլև միքանի բացա-
սական կողմեր:

Վո՛չ, այդ սխալ չե՞ր: Վոչ մի հե-
ղափոխական միջոցաւում առահովված
չե վորոշ բացասական կողմերից, յեթե

այն սխալ կերպով և կիրառվում: Միե-
նույնը պետք ե առել նաև հացի կոլ-
տնտեսային առևտուրի մասին: Կոլտնտե-
սային առևտուրը հարկավոր և ու շո-
հավելու ինչպես դյուռին, այնպես ել
քաղաքին, ինչպես բանվոր դաստկար-
դին, այնպես ել դյուդացիությանը:
Յեկ հենց այն պատճառով, վոր այն
շահավետ ե՝ պետք եր մացնել այն:

Ինչո՞վ եյին զեկավարվում ժողկոմ-
խորհն ու ԿԿ-ն՝ հացի կոլտնտեսային
առևտուր մացնելով:

Ամենից առաջ նրանով, վոր ընդլայ-
նեն ապրանքապատյափի բազան քաղաքի
ու գյուղի միջև և բարելառվեն բանվոր-
ներին գյուղատնտեսական մթերքներ,
իսկ գյուղացիներին քաղաքային շին-
վածքներ մատակարարելը: Տարակույս
լինել չի կարող, վոր դրա համար լոկ
միայն պետական ու կոռուկերատիվ ա-
ռևտուրը հերիք չե: Ապրանքապատյափի
այդ կանալները հարկավոր եր լրացնել
նոր կանալով—կոլտնտեսային առև-

տրով։ Յեկ մենք, կոլտնտեսային առեւ-
տուր մտցնելով, լրացրինք այդ կտ-
նալները։

Այնուհետև, նրանք զեկավարվում ե-
լին նրանով, վոր հացի կոլտնտեսային
առեւրի միջոցով կոլտնտեսականին յե-
կամաի լրացրուցիչ աղբյուր տան և նրա
տնտեսական գրությունն ամրապնդեն։

Նրանք զեկավարվում ելին, վերջա-
ռում, նրանով, վոր կոլտնտեսային ա-
ռեւրուր մտցնելով՝ դյուզացուն նոր
մղում տան կոլտնտեսությունների աշ-
խատանքը բարելավելու համար ինչպես
ցանքի գծով, այնպես ել բերքահալա-
քի գծով։

Դուք գիտեք, վոր ժողկոմխորհի ու
կի-ի այս ըուլոր նկատառումներն ամ-
րողջությամբ ու լիովին հաստատվեցին
փաստերով։ կոլտնտեսությունների վեր-
ջին ժամանակների կյանքից։ կոլտնտե-
սությունների ամրապնդման պրօցեսի
ուժեղացումը, կոլտնտեսություններից
գուրս գալու գեղքերի դադարումը,

մենատնտեսների աճող հոսանքը դեպի
կոլտնտեսությունները, կոլտնտեսական-
ների ձգտումը՝ մեծ ընտրությամբ ըն-
դունելու նոր անդամներ, —այս ամենը
և շատ նման բաններ անտարակուսելիո-
րեն խոսում են այն մասին, վոր կոլ-
տնտեսային առեւրուր վո՛չ միայն
չթուլացրեց, այլ, ընդհակառակը, ու-
ժեղացրեց ու ամրացրեց կոլտնտեսու-
թյունների գրությունը։

Հետեւարար, մեր աշխատանքի թե-
րությունները գյուղում բացարձիւմ
են վո՛չ թե կոլտնտեսային առեւրով,
այլ նրա վոչ ամեն ժամանակ ճիշտ
կիրառումով, նոր իրազբությունը հաշ-
վի առնելու անկարողությամբ, իբևնց
շարքերը նոր իրազբության համեմատ
վերակազմելու անկարողությամբ, ի-
րազբություն, վոր ստեղծվեց հացի
կոլտնտեսային առեւրուր հայտարարե-
լով։

2) Գյուղում կատարած մեր աշխա-
տանքի թերությունների յերկրորդ

պատճառն այն ե, վոր մեր ընկերները
 տեղերում, —և վոչ միայն այդ ընկեր-
 ները, —չասկացան մեր աշխատանքի
 պայմանների փոփոխությունը գյու-
 ղում, վոր տեղի ունեցավ կոլտնտեսու-
 թյունների տիրապետող դրության հաս-
 տաման կապակցությամբ հիմնական
 հացահատիկային շրջաններում: Մնաք
 բոլորս ուրախանում ենք այն բանի հա-
 մար, վոր տնտեսության կոլտնտեսա-
 յին ձեզ տիրապետող ձեւ դարձալ մեր
 հացահատիկային շրջաններում: Բայց
 վոչ բոլորն են հասկանում այն, վոր
 այդ հանդամանքը վո՞չ թե պակասեց-
 նում, այլ ավելացնում ե մեր հոգսերն
 ու մեր պատասխանատվությունը գյու-
 ղատնտեսության դարձացման գործում:
 Շատերը կարծում են, թե քանի վոր
 ձեռք ե բերված այս կամ այն շրջա-
 նում, այս կամ այն մարդում, կոլեկ-
 տիվացման, ասենք, 70 կամ 80%, ապա
 դրանով ամեն ինչ արված ե, և մենք
 կարող ենք գործն իրերի բնական ըն-

թացքին թողնել, գործը թողնել ինք-
 նահոսի, կարծելով, թե կոլեկտիվա-
 ցումն ինքն իր գործը կանի, ինքը
 կրաքարացնի գյուղատնտեսությունը:
 Բայց այդ խորը մոլորություն ե, ըն-
 կերնե՛ր: Իրոք, անցումը դեպի կոլեկ-
 տիվ տնտեսություն իրեւ տնտեսության
 գերակշռող ձև, վո՞չ թե նվազեցնում,
 այլ ավելացնում ե մեր հոգսերը գյու-
 ղատնտեսության վերաբերմամբ, վո՞չ
 թե նվազեցնում, այլ ավելացնում ե
 կոմունիստների դեկալար գերը գյու-
 ղատնտեսության բարձրացման գոր-
 ծում: Այժմ ավելի քան յերեկօց ինք-
 նահոսը վտանգավոր ե գյուղատնտեսու-
 թյան զարգացման գործի համար: Ինք-
 նահոսն այժմ կարող ե ամբողջ գործը
 կործանել:

Քանի դեռ գյուղում գերակշռում էք
 մենատնտեսատերը, կուսակցությունը
 կարող եր իր միջամտությունը գյու-
 ղատնտեսության զարգացման գործին
 սահմանափակել ողնության, խորհրդի

կամ նախաղղուշացման առանձին գործողություններով: Այն ժամանակ մենատեսեն ինքը պետք է հոդ տաների իր տնտեսության մասին, վորովհետեւ նա չեր կարող պատասխանատվությունն այլ տնտեսության համար ուրիշ մեկի վրա բարդել, մի տնտեսություն, վոր միմիայն նրա անձնական տնտեսությունն եր, և վոչ վոքի վրա չեր կարուի հույս գնել, բացի հենց իրենից: Այն ժամանակ մենատեսեն ինքը պետք է հոդ տաներ ցանքի, բերքահավաքի ու գյուղատնտեսական աշխատանքի առասարակ բոլոր պլոցեների մասին, յեթե նա չեր ուզում առանց հացի մնալ և սովոր զոհ դառնալ: Կոլեկտիվ տնտեսությանն անցնելու հետ գործն ելապես փոխվեց: Կոլտնտեսությունը միանձնյա տնտեսություն չե: Կոլտընտեսականներն այժմ հենց այդպես ել ասում են. «Կոլտնտեսությունն իմն և և իմը չե. նա իմն ե, բայց դրա հետ միաժամանակ նա պատկանում է իմա-

կին, Ֆիլիպպին, Միխայիլին և կոլտնտեսության մյուս անդամներին. կոլտնտեսությունն ընդհանուր ե»: Հիմա նա, կոլտնտեսականը, յերեկվա մենատնտեսը և այսորվա կոլեկտիվիստը, — հիմա նա կարող է պատասխանատվությունը բարդել և կարող է հույսը դնել կոլտնտեսության մյուս անդամների վրա, գիտնալով, վոր կոլտնտեսությունը նրան առանց հացի չի թողնի: Այդ պատճառով նա, կոլտնտեսականը, ավելի քիչ հոգսեր ունի, քան թե անհատական տնտեսության ժամանակ, վորովհետեւ ներկայումս տնտեսության վերաբերյալ հոգսերն ու պատասխանատվությունը բաշխված են բոլոր կոլտնտեսականների միջև:

Իսկ ի՞նչ է հետեւմ սրանից: Իսկ սրանից հետեւմ ե այն, վոր պատասխանատվության ծանրության կենտրոնը տնտեսությունը վերաբերյալ հոգսերն ու պատասխանատվությունը բաշխված են բոլոր կոլտնտեսականների միջև:

կոլտնտեսության զեկավար կորիգին :
Հիմա՝ զյուղացիները վո՞չ թե հենց ե-
րենցից են սլահանջում հոգ տանել
տնտեսության մասին և զործերը բա-
նական կերպով վարել, այլ կոլտնտե-
սության զեկավարությունից, կամ, ա-
վելի ճիշտ, վոչ այնքան հենց իրենցից,
զորքան կոլտնտեսության զեկավարու-
թյունից : Խսկ ի՞նչ և նշանակում այդ :
Այդ նշանակում ե, զոր կուսակցու-
թյունը հիմա չէ կաբող այլևս սահ-
մանափակվել միջամտության առանձին
զործողություններով զյուղատնտեսա-
կան զարգացման սլրոցեսի մեջ : Նա
հիմա պետք ե իր ձեռքը վերցնի կոլ-
տնտեսությունների զեկավարությունը,
իր վրա վերցնի պատասխանատվու-
թյունո աշխատանքի համար և ունի
կոլտնտեսականներին՝ իրենց տնտեսու-
թյունն առաջ տանելու դիտության ու
տեխնիկայի ավալների հիման վրա :

Բայց այս՝ ամենը չէ : Կոլտնտեսու-
թյունը խոչըր տնտեսություն ե : Բայց

Խոչքը տնտեսությունը չի կարելի առանց պլանի վարել։ Հարյուրավոր, իսկ յերեմն եւ հազարավոր տնտեսություններ ընդուրելով խոչը տնտեսություն հոգագործության մեջ կարելի յել վարել միմիայն պլանային զեկավարության կարգով։ Առանց գրան՝ նա պետք է կործանվի ու քայլայիլ։ Առա ձեզ կուտանասակարգի ժամանակի ելի մի նոր պայման, վերն արմատապես տարբերվում է մանր միանձնյա տնտեսություն վարելու պայմաններից։ Կարելի յել արդյոք այլպիսի տնտեսության վարումը թողնել, այսպես ասած, իրերի բնական ընթացքին, ինքնահոսի։ Պարզ է, վոր չի կարելի։ Այդպիսի տնտեսություն վարելու համար հարկավոր է կուտանասությունն ապահովել տարբական գրադիտություն ունեցող մարդկանց վորոշ մինիմումով, վորոնք ընդունակ լինեն պլանավորելու տնտեսությունն ու կազմակերպված ձևով վարելու այն։ Հասկանալի յել, վոր ա-

հանց Նորէրդային իշխանության սկս-
տեմատիկ միջամտության կոլտնտեսա-
յին շինարարության գործին, առանց
նրա սիստեմատիկ ողնության՝ այդպի-
սի տնտեսություն կտբդի դնել անկտ-
բելի յե:

Իսկ սրանից ի՞նչ ե հետեւում: Իսկ
որանից հետեւում ե այն, վոր կոլտըն-
տեսակարգը վո՞չ թե նվազեցնում, այլ
ավելացնում ե կուսակցության ու կա-
ռավարության հոգսերն ու պատասխա-
նառավագման վերաբերմաբ: Սրանից
զարդացման գյուղատնտեսությանը,
հետեւում ե, վոր կուսակցությունը,
յեթե նա ուզում ե զեկավարել կոլտըն-
տեսային չարժումը, պետք ե մտնի
կոլտնտեսային կյանքի ու կոլտնտեսա-
յին զեկավարման բոլոր մանրամասնու-
թյունների մեջ: Սրանից հետեւում ե,
վոր կուսակցությունը պետք ե վո՞չ
թե նվազեցնի, այլ ավելացնի իր կա-
ռերը կոլտնտեսությունների հետ, վոր
նա պետք ե իմանա ամբողջ անցուդար-

ձը կոլտնտեսությունների մեջ, վոր-
պեսզի ժամանակին ողնության համար
և կանխի կոլտնտեսություններին
սպառնացող վասանդները:

Իսկ ի՞նչ ենք տեսնում: Իրականում:
Իրականում տեսնում ենք ամբողջ մի
չարք չքննային ու մարզային կազմա-
կերպությունների կտրվածությունը
կոլտնտեսությունների կյանքից, նրանց
պահանջններից: Նստած են մարդիկ
գրասենյակներում և ինքնագուհությամբ
գրիչ են ճռճռացնում, առանց նկատե-
լու, վոր կոլտնտեսությունների զար-
դացումն անցնում ե բյուրոկրատական
գրասենյակների կողքից: Կոլտնտեսու-
թյուններից կտրված լինելն առանձին
գեպքերում մինչև այն տեղն եր հաս-
նում, վոր յերկրային կազմակերպու-
թյունների անդամներից վոմանք իրենց
մոտ յերկրում յեղած կոլտնտեսու-
թյունների գործերի մասին իմանում ե-
րին վո՞չ թե համապատասխան չքա-
հային կազմակերպություններից, այլ

Ակա-ի ամուսներից Մոսկվայում։ Մա-
շավալի յե, բայց սա փաստ է, ընկեր-
ներ։ Անհատական տնտեսությունից
կոլտնտեսություններին անցնելը պետք
է հասցներ կոմունիստների ղեկավա-
րության ուժեղացմանը դյուզում։ Իսկ
իրոք մի շարք դեպքերում այդ անցու-
մը հասցեց այն բանին, վոր կոմու-
նիստները հանդստացան դափնիների
վրա, հաղթակելով (ԿօՅՑՐԱՅ) կո-
լեկտիվացման բարձր տոկոսներով, և
գործը թողին ինքնահոսի, գործը թո-
ղին իրերի բնական ընթացքին։ Կոլ-
տնտեսային տնտեսության ոլլանային
ղեկավարման պրոբլեմը պետք է հասց-
ներ կոմունիստների ղեկավարության
ուժեղացմանը կոլտնտեսությունների
մեջ։ Իսկ իրավես մի շարք դեպքերում
ստացվեց այն, վոր կոմունիստները
բացակա գտնվեցին, իսկ կոլտնտեսու-
թյուններում կարգադրում ելին նախ-
կին սպիտակ սպաները, նախկին
պետլյուրականները և պոհապարակ

բանվորների ու դյուզացիների թշնամի-
ները։

Այսպես և դյուզում կատարած մեր
աշխատանքի թերությունների յերկորդ
ողափառի բանը։

3) Գյուզում կատարած մեր աշխա-
տանքի թերությունների յերրորդ պատ-
ճառ այն է, վոր մեր շատ ընկերներ
դերագնահատեցին կոլտնտեսություն-
ներն իրեւ տնտեսության նոր ձև, գե-
րազնահատեցին ու սրբազատկերի վե-
րածեցին նրանց։ Նրանք վճռեցին, թե
քանի վոր տրված են կոլտնտեսություն-
ներն իրեւ տնտեսության սոցիալիստա-
կան ձև, —ապա զրանով արդեն տրված
ե ամեն ինչ, զրանով արդեն ապահով-
ված է կոլտնտեսությունների գործի
ճիշտ վարումը, կոլտնտեսային տնտե-
սության ճիշտ պլանավորումը, կոլտըն-
տեսությունների փոխարկումը որինա-
կելի սոցիալիստական տնտեսություն-
ների։ Նրանք չհասկացան, վոր կոլտըն-
տեսություններն իրենց կաղմակերպա-

կան կառուցման իմաստով զեռևս թույլ
 են և կարիք են զգում կուսակցության
 կողմից ըուրջ ողնության, ինչպես
 նրանց ստուգված բոլշևիկյան կադրեր
 մատակարարելու իմաստով, այնպես ել
 կոլտնտեսային գործերի ընթացիկ զե-
 կալարության իմաստով։ Բայց այս՝
 ամենը չե, և մինչև անդամ գլխավորը
 չե։ Այստեղ գլխավոր թերությունն
 այն ե, վոր մեր շատ ընկերներ գերա-
 գնահատեցին հենց բուն կոլտնտեսու-
 թյունների ուժերն ու հանրավորու-
 թյուններն, իբրև գյուղատնտեսության
 կազմակերպման նոր ձևի։ Նրանք չհաս-
 կացան այն, վոր կոլտնտեսությունն
 ինքնըստինքյան, չնայած վոր նա արն-
 տեսության սոցիալիստական ձև է հան-
 դիսանում, — դեռ ամենեին ել ապահով-
 ված չե ամեն տեսակ վտանգներից և
 կոլտնտեսությունների ղեկավարության
 մեջ ամեն տեսակ հակահեղափոխական
 տարրերի ներթափանցումից, ապահով-
 ված չե այն բանից, վոր վորոշ պայ-

մաններում կոլտնտեսությունները կա-
 րող են հակախորհրդային տարրերի
 կողմից իրենց նպատակների համար ող-
 տադրձվել։

Կոլտնտեսությունը տնտեսական
 կազմակերպության սոցիալիստական
 ձևն և այնպես, ինչպես խորհուրդները
 քաղաքական կազմակերպության սոցիա-
 լիստական ձևն են հանդիսանում։ Ինչ-
 պես կոլտնտեսությունները, այնպես ել
 խորհուրդները հանդիսանում են մեր
 հեղափոխության ամենամեծ նվաճումը,
 բանվոր դասակարգի ամենամեծ նվա-
 ճումը։ Բայց կոլտնտեսություններն ու
 խորհուրդները միմիայն կազմակերպու-
 թյան ձև են, ճիշտ ե, սոցիալիստական
 ձև, բայց այնուամենայնիվ կազմակեր-
 պության ձև։ Ամեն ինչ կախված է
 նրանից, թե ինչպիսի բռվանդակություն
 կլցվի այդ ձևի մեջ։ Մենք դեպքեր գի-
 տենք, յերբ բանվորների ու զինվորնե-
 րի պատգամավորների խորհուրդները
 վորոշ ժամանակ աջակցում ենին հա-

կահեղափոխությանը հեղափոխության
դեմ: Այդպես եր բանը մեզ մոտ,
իԱՀՄ մէջ, որինակ, 1917 թվի հունիսին,
յերբ մենչեւիներն ու ևս-երներն
եյին զեկալարում խորհուրդները, և
խորհուրդները պաշտպանում եյին հա-
կահեղափոխությունը հեղափոխության
դեմ: Այդպես եր բանը Գերմանիայում
1918 թվականի վերջին, յերբ սոցիալ-
դեմոկրատներն եյին զեկալարում խոր-
հուրդները և յերբ նրանք պաշտպանում
եյին հակահեղափոխությունը հեղափո-
խության դեմ: Հետևաբար, բանը մի-
այն խորհուրդները չեն, իրրե կազմա-
կերպության ձև, թեու այդ ձեն
ինքն ամենամեծ հեղափոխական նվա-
ճանման ե: Բանն, ամենից առաջ, խոր-
հուրդների աշխատանքի բովանդակու-
թյունն ե, բանը խորհուրդների աշխա-
տանքի բնույթն ե, բանն այն ե, թե
հատկապես ով ե զեկալարում խոր-
հուրդները, — հեղափոխականները, թե
հակահեղափոխականները: Սրանով եւ,

իսկապես, բացատրվում ե այն
փաստը, վոր հակահեղափոխականները
միշտ եւ խորհուրդների դեմ չեն ար-
տահայտվում: Հայտնի յե, որինակ,
վոր սուսական հակահեղափոխության
պարագլուխ Միլյուկովը կրոնչտաղտի
ապստամբության ժամանակ արտա-
հայտվում եր խորհուրդների ողտին,
բայց առանց կոմունիստների: «Խոր-
հուրդներ առանց կոմունիստների»—ահա
թե այն ժամանակ վորն եր սուսական
հակահեղափոխության պարագլուխ Մի-
լյուկովի լոգունը: Հակահեղափոխա-
կանները հասկացան, վոր բանը միայն
իրենք խորհուրդները չեն, այլ ամենից
առաջ այն, թե ով կզեկալարի այդ
խորհուրդները:

Միենույնը պետք ե ասել կոլտնտե-
սությունների մասին: Կոլտնտեսու-
թյուններն, իրրե տնտեսության կազ-
մակերպության սոցիալիստական ձև,
կարող են անտեսական շինարարության
հրաշքներ ցույց տալ, յեթե նրանց

դլուխ են կանգնած իսկական հեղափոխականներ, բոլցելիներ, կոմունիստներ : Յեվ ընդհակառակը, կոլտնտեսությունները կարող են վորոշ ժամանակով ամեն տեսակ հակահեղափոխական դորձողությունների քողարկման փոխարկել, յեթե կոլտնտեսություններում կարգադրողները լինեն ևս-երներն ու մենչեկիները, պետլուրական սպաներն ու այլ սպիտակ-զվարդիականները, նախկին գենիլինյաններն ու կուչակյանները : Ըստմին պետք է նկատի ունենալ, վոր կոլտնտեսություններն իրեւ կազմակերպության ձև վո՞չ միայն ապահովված չեն հակախորհրդային տարրերի ներթափանցումից, այլ առաջին շրջանում նույնիսկ վորոշ հարմարություններ են ներկայացնում՝ հակահեղափոխականների կողմից ժամանակակիր կերպով ողտագործվելու համար : Քանի դեռ գյուղացիներն անհատական անտեսություն եյին վարում—նրանք ցանուցիւ եյին և բաժանված

միմյանցից, դրա համար ել հակախորհրդական տարրերի հակահեղափոխական վոտնձությունները գյուղացիական միջավայրում մեծ եֆֆեկտ առաջացնել չեյին կարող: Բոլորովին այլ պատկեր ե ստացվում այն ժամանակ, յերբ գյուղացիները կոլտնտեսային տնտեսության են անցնում: Այստեղ գյուղացիներն ի գեցս կոլտնտեսությունների արդեն ունեն մասսայական կազմակերպության պատրաստի ձև: Այդ պատճառով հակախորհրդային տարրերի ներթափանցումը կոլտնտեսությունների մեջ և նրանց հակախորհրդային գործունեյությունը կարող են չատ ավելի մեծ եֆֆեկտ առաջացնել: Պետք է կարծել, վոր հակախորհրդային տարրերն այս ամենը հաշվի յեն առնում: Հայտնի յեւ, վոր հակահեղափոխականների մի մասը, որինակ, Հյուսիսային կովկասում, ինքն ե ջանում կոլտնտեսությունների նման մի բան ստեղծել, ոգտագործելով նրանք իրեւ իրենց

բնդհատակյա կազմակերպությունների
լեզարքովարկում։ Հայտնի յե նմանա-
պես, վոր հակախորհրդային տարրերը
մի շարք չըջաններում, վորտեղ նրանք
դեռ մերկացված ու ջախջախված
չեն, —սիրով ևն մտնում կոլտնտեսու-
թյունները, մինչև անդամ զովարանում
ևն կոլտնտեսությունները նրա համար,
վորպեսզի կոլտնտեսությունների ներ-
սում հակահեղափոխական աշխատանքի
բներ ստեղծեն։ Հայտնի յե նույնպես,
վոր հակախորհրդային տարրերի մի
մասն ինքն ե հիմա կոլտնտեսություն-
ների ոգտին արտահայտվում, բայց այն
պայմանով, վոր կոլտնտեսություննե-
րում կոմունիսաներ չլինեն։ «կոլտնտե-
սություններ տանց կոմունիսաների»—
տհա թե ինչ լողունդ ե հասունացվում
այժմ հակախորհրդային տարրերի մեջ։
Հետեւարար, բանը միայն կոլտնտեսու-
թյուններն իրենք չեն, իրեւ կազմա-
կերպության սոցիալիստական ձեւ, այլ
բանն ամենից տուած այն ե, թե ինչ

բովանդակություն ե լցվում այդ ձեի
մեջ, —ըանն ամենից տուած այն ե, թե
ով ե կանգնած կոլտնտեսությունների
զլուխ և ով ե զեկալվարում կոլտնտե-
սությունները։

Ենինիզմի տեսակետից՝ կոլտնտեսու-
թյուններն, ինչպես և խորհուրդները,
վերցրած իրեւ կազմակերպության
ձեւ, զենքը ևն և միմիայն զենք։ Այդ
զենքը վորոշ պայմաններում կարելի յե
ուղղել հեղափոխության դեմ։ Այն կա-
րելի յե ուղղել հակահեղափոխության
դեմ։ Այն կարող ե ծառայել բանվոր
դասակարգին ու զյուղացիությանը։
Այն կարող ե վորոշ պայմաններում
ծառայել բանվոր դասակարգի ու զյու-
ղացիության թշնամիններին։ Ամբողջ
բանն այն ե, թե ում ձեռքում ե
դանվում այդ զենքը և ում դեմ ե ուղ-
ղվելու այն։

Այս բանն սկսում են հասկանալ,
դասակարգային բնազդից մզված, բան-

ժանիքներով, հասու վղով, դանակը
ձեռին: Վորոնում են կուլակին այն-
պես, ինչպես մենք ճանաչում ենք նրան
ովակատներից: Բայց այդպիսի կու-
լակներ վաղուց արդեն չկան մակե-
րեւութիւնք: Այժմյան կուլակներն ու
յենթակուլակները, այժմյան հակախոր-
հըրդային տարբերը գյուղում—դրանք
մեծ մասամբ «Հանդարտ», «Քաղցրիկ»,
դրեթե «սուրբ» մարդիկ են: Հարկա-
վոր չե կոլտնտեսությունից հեռու վո-
րոնել նրանց: Նրանք նստած են հենց
կոլտնտեսության մեջ և այնտեղ մա-
սնավետների, տնտմավարների, հաշ-
վետարների, քարտուղարների և այլ
պաշտոններ են վարում: Նրանք յերեք
չեն ասի—«կորչեն կոլտնտեսություն-
ները»: Նրանք «կողմնակից են» կոլ-
տնտեսությունների: Բայց նրանք
կոլտնտեսություններում այնպիսի սա-
բուտափային ու վնասարարական աշխա-
տանք են կատարում, վոր կոլտնտեսու-
թյուններին այդ եժան չի նստի:

Նրանք յերեք չեն ասի—«կորչեն հացա-
մթերումները»: Նրանք «կողմնակից
են» հացամթերումների: Նրանք «մի-
այն» դեմագոգիա յեն անում ու պա-
հանջում են, վոր կոլտնտեսությունը
կենդանաբուծության համար յերեք
անդամ ավելի մեծ չափով Փոնդ կազ-
մի, քան այդ պահանջվում ե գործի
համար, վոր կոլտնտեսությունը յերեք
անդամ ավելի մեծ չափով ապահովա-
գրական Փոնդ կազմի, քան այդ պա-
հանջվում ե գործի համար, վոր կոլ-
տնտեսությունը հանրային սննդի հա-
մար որական Յից մինչև 10 Փունտ
հաց բաց թողնի ամեն մի աշխատողին
և այլն: Հասկանալի յե, վոր այսպի-
սի «Փոնդերից» ու հանրային սննդի
համար տացքերից հետո, այսպիսի
խարեւայական դեմագոգիայից հետո՝
կոլտնտեսության տնտեսական զորու-
թյունը պետք ե ջլատվի, և հացամթե-
րումների համար տեղ չի մնում:

Այդպիսի ճարպիկ թշնամուն նշմա-

չն կարող լինել բնության մեջ: «Զե-
զոք» կոլտնտեսությունները—դա այն-
պիսի մարդկանց Փանտազիան ե, վո-
րոնց աչքեր են տրված նրա համար,
վորպեսզի վոչինչ չտեսնեն: Այնպիսի
սուր դասակարգային կովկ ժամանակ,
վորպիսին գոյություն ունի այժմ մեզ
մոտ Խորհրդային յերկրում, «չեզոք»
կոլտնտեսությունների համար տեղ չի
մնում. այդպիսի երադրության ժամա-
նակ կոլտնտեսությունները կարող են
կամ բոլշևիկյան լինել, կամ հակա-
խորհրդային: Յեկ յեթե մենք չենք
զեկավարում այս կամ այն կոլտնտե-
սություններում, ապա այդ նշանակում
ե, վոր հակախորհրդային տարրերն են
զեկավարում նրանց: Սրա մասին վոչ
մի տարակույս լինել չի կարող:

5) Վերջապես, գյուղում կատարած
մեր աշխատանքի թերությունների մի
պատճառ ես: Դա, այդ պատ-
ճառը, կոմունիստների գերի ու պա-
տասխանատվության թերագնահատումն

և կոլտնտեսային շինարարության
դորձում, կոմունիստների գերի ու
պատասխանատվության թերազնահա-
տումը՝ հացամթերումների դորձում:
Խոսելով հացամթերումների դժվարու-
թյունների մասին՝ կոմունիստները՝ սո-
վորաբար պատասխանատվությունը գը-
ցում են գյուղացիների վրա, պնդելով,
թե ամեն բանում մեղավորը գյուղացի-
ներն են: Բայց այդ միանդամայն սիամ
և անպայման անարդարացի: Գյու-
ղացիներն այստեղ գործ չունեն: Ենթե
խոսքը վերաբերում է պատասխանա-
տվությանն ու մեղավորությանը, ա-
պա պատասխանատվությունն ամբող-
ջությամբ ու լիովին ընկնում է կոմու-
նիստների վրա, իսկ այստեղ ամեն
բանում՝ մեղավոր ենք—միմիայն մենք,
կոմունիստներս:

Աշխարհում չկա և չի յեղել այնպիսի
հզոր ու հեղինակավոր իշխանություն,
ինչպիսին ե մեր, Խորհրդային իշխա-
նությունը: Աշխարհում չկա և չի յե-

Դեւ այնպիսի հզոր ու հեղինակալոր կու-
սակցություն, ինչպիսին ե մեր, կո-
մունիստական կուսակցությունը։ Վոչ
վոք չի խանգարում և չի կարող խան-
գարել մեզ կոլտնտեսությունների դոր-
ծըն այնպես վարել, ինչպես այդ պա-
հանջում են կոլտնտեսությունների շա-
հերը, պետության շահերը։ Յեվ յեթե
մեզ՝ վոչ-միշտ ե հաջողվում կոլտըն-
տեսությունների գործն այնպես վարել,
ինչպես այդ պահանջում ե լենինիզմը,
յեթե մենք հաճախ մի շարք կոպիտ,
աններելի սխալներ ենք թույլ տալիս,
ասենք, հացամթերումների գծով, ապա
այս բանում մեղալոր ենք մենք, և
միմիայն մենք։

Մենք ենք մեղալոր այն բանում,
վոր չնշմարեցինք հացի կոլտնտեսային
առևտրի բացասական կողմերը և մի
շարք ամենակոպիտ սխալներ թույլ
տվինք։ Մենք ենք մեղալոր այն բա-
նում, վոր մեր կաղմակերպություն-
ների մի ամբողջ շարք կարվեց կոլ-

տնտեսություններից, հանդստացալ
դափնիների վրա և անձնատուր յեղավ
ինքնահոսի տարերքին։ Մենք ենք մե-
ղալոր այն բանում, վոր մեր ընկերնե-
րի մի ամբողջ շարք գեռևս գերազա-
հատում և կոլտնտեսություններն իրեւ
մասսայական կաղմակերպության ձև,
չասկանալով, վոր բանը վոչ այնքան
բուն ձևն ե, վորքան այն, վոր ինքներս
մեզ վրա վերցնենք կոլտնտեսություն-
ների զեկավարությունը և դուքս մղենք
կոլտնտեսությունների զեկավարությու-
նից հակախորհրդային տարբերին։
Մենք ենք մեղալոր այն բանում, վոր
չնշմարեցինք նոր իրադրությունը և
մեզ համար չպարզեցինք նոր տակտի-
կան գասակարգային թշնամու, վոր
դործում եր զանդաղ իրամահատու-
թյամբ։

Հարց ե առաջ դալիս, ի՞նչ գործ
ունեն այստեղ գյուղացիները։

Եսս զիտեմ կոլտնտեսությունների
ամբողջ խմբեր, վորոնք զարգանում ու

բարդավաճում են, ճշտակահորեն կտա-
տարում պետության առաջարբանքներն
ու որեցը ամրանում են տնտեսական
տեսակետից։ Մյուս կողմից, յես զի-
տեմ նաև այնպիսի կոլտնտեսություն-
ներ՝ նախորդ կոլտնտեսություններին
հարեան, վորոնք, չնայած նրանց հետ
ունեցած միատեսակ բերքին ու միա-
տեսակ որյեկտիվ պայմաններին, —
հյուծվում են ու քայլայլում։ Ի՞նչն ե
պատճառը։ Պատճառն այն է, վոր կոլ-
տնտեսությունների առաջին խումբը դե-
կալարում են իսկական կոմունիստներ,
իսկ յերկրորդ խումբը դեկալարում են
զիսարկներ, ճիշտ և կուսակցական
տոմսը զրպանում, բայց այնուամենայ-
նիվ զլատարկներ։

Հարց ե առաջ զալիս, ի՞նչ զործ
ունեն այսուղ զյուղացիները։

Կոմունիստների գերի ու պատասխա-
նատության թերապնահատության հե-
տեանքն այն է, վոր զյուղում կտտա-
րած մեր աշխատանքի թերությունների

պատճառը հաճախ վորոնում են վոչ
այնտեղ, վորտեղ պետք ե վորոնել, և
այդ պատճառով ել թերությունները
մնում են չվերացված։

Վո՞չ թե զյուղացիների մեջ պետք ե
վորոնել հացամթերումների դժվարու-
թյունների պատճառը, այլ հենց մեր
մեջ, մեր սեփական չարքերում։ Վո-
րովհետեւ մենք ենք կանգնած իշխանու-
թյան դլուխ, մեր արամազրության
տակ են պետության միջոցները, մենք
ենք կոչված զեկավարելու կոլտնտեսու-
թյունները և մենք պետք ե կրենք լիա-
կատար պատասխանառվությունը գյու-
ղում կտտարկող աշխատանքի համար։

Սրանք են զյուղում կատարած մեր
աշխատանքի թերությունները վորոշող
զլատարկ պատճառները։

Կարելի յե կարծել, վոր յես չափա-
զանց մռայլ պատկեր նկարեցի, վոր
մեզ մոտ ամբողջ աշխատանքը զյու-

Հայ. թարգմ. Խմբ. Բ. Մարտիրոսյան
Տեխն. խմբ. Ա. Խաչատրյան
Սրբագրիչ Հ. Մանվելյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Աբովյան

Գլավլիուսի լիազոր № Կ-3268,
Հրատ. Ն 548
Պատկեր Ն 41, Տիրաժ 5.000
Հանձնված ե արտադր. 3/III 1938 թ.
Ստորագրված ե տպ. 26/III 1938 թ.
Գինը 25 կ., կազմը 1 ռ.

Պետհրատ—Կուսակցական-քաղաքական,
գրականության բաժնի տպարան,
Երևան, Ալավերդյան Ն 65.

ՀՀ Ազգային գրադարան



NL0179098

